ԿԱԽԱԿՈԹԱՌ ԿԱՑԻՆ ԼԵՆԻՆԱԿԱՆԻՑ

ԱՐԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ, ԼԵՎՈՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

1976 թ. գարնանը Շիրակի պատմության թանգարանի (քաղ. Լենինական) հնագիտական ֆոնդերին ծանոթանալիս մեր ուշադրությունը գրավեց փոքրիկ, բրոնզե կախակոթտռ կացինը։ Քննությունից պարզվեց, որ այն պատկանում է Կուր-Արաքսյան մշակույթի կոթառով կացինների խմբին։

Նկատի ունենալով մ. թ. ա. III հազարամյակում կացինների հազվադեպ լինելը, ինչպես նաև նրանց որոշակի գիտական նշանակությունը, նպատակահարմար ենք գտնում տալ Լենինականի կացնի մանրամասն նկարագրությունը, որը հետագա ուսումնասիրությունների ընթացքում հնարավորություն կընձեռի ավելի լայն պատկերացում կազմելու Հայաստանի վաղ բրոնզեդարյան մետաղադործության զարգացման մակարդակի մասին։ Կացինը թանգարան է հանձնվել 1960 թ. և կրում է 2126 գույքահամարը։ Այն պատահաբար հայտնաբերվել է Լենինականի մսի կոմբինատի տարածքում, շինարարական աշխատանքների ժամանակ։ Հիշյալ տարածքում էլ գտնվում է նախնադարյան այն հուշարձանը, որտեղ առաջին անգամ, 1930-ական թվականներին, պեղումներ է կատարել Ա. Քալանթարը։ Նրա հայտնաբերած նյութական մշակույթի ողջ հավաքածուն պատկանում էր ուշ բրոնզեդարյան և վաղ երկաթի ժամանակաշրջաններին[1]։

1939 թ. այս հնավայրից հայտնաբերված մեծ քանակությամբ մետաղագործական արտադրանքի նմուշներ հանձնվել են Շիրակի պատմության թանգարան, որոնք հետագայում լայնորեն լուսաբանվել են Հ. Մարտիրոսյանի առանձին աշխատություններում։ Այդ հավաքածուն հեղինակը թվագրել է վաղ երկաթի և նրա լայն տարածման ժամանակաշրջաններով[2]։ *Նշված հնավայրի և նրա մոտ գտնվող դամբարանադաշտի պեղումները վերսկսվեցին միայն 1952 թ. ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արշավախմբի կողմից (ղեկավար Հ. Մարտիրոսյան)։ Պեղածո նյութերը հիմնականում պատկանում են մ. թ. ա. I հազարամյակի I կեսին, բացառությամբ մեկ բրոնզե դաշույնի, որը հեղինակը համարում էր «հանելուկային» և թվագրում «էնեոլիթյան» ժամանակաշրջանով*[3]։ *Տ. Խաչատրյանը, Շիրակի հնագիտական մշակույթի վերաբերյալ իր մենագրության մեջ նշում է, որ այս հնավայրից տարբեր ժամանակներում Շիրակի թանգարան հանձնված նյութերի շարքում առկա են նաև մ. թ. ա. III հազարամյակին բնորոշ խեցեգործական արտադրանքի նմուշներ։ Նա հնագիտական փաստացի նյութերի հիման վրա հիշյալ հուշարձանը դասում է բազմաշերտ այն հուշարձանների խմբին, որոնց ստորին շեր-*

---

[1] А. А. Калантар, Открытие дохалдского поселения близ Ленинакана («Проблемы истории докапиталистического общества», 1934, № 9—10, *էջ 166—168)։*

[2] А. А. Мартиросян, О древнем поселении и могильнике близ Ленинакана («Краткое сообщение Института истории материальной культуры», 1954, вып. 55, *էջ 87—97)։*

[3] *Նույն տեղում, էջ 106—116։*

տերը պատկանում են վաղ բրոնզի ժամանակաշրջանին[4]։ Հենց այդ՝ վաղ բրոնզեդարյան շերտերից էլ, անկասկած, հայտնաբերվել է քննվող կախակոթաո կացինը[5]։



Նկ 1

Կացինը հիմնականում լավ է պահպանված (նկ. 1)։ Նրա անհարթ մակերեսը պատված է անհավասարաչափ ժանգով։ Աշխատող բերանի որոշ մասերը պինդ մարմինների հարվածելու հետևանքով ծռված են։ Կացնի երկարությունը 15,2 սմ է, քաշը՝ 530 գ, շեղբի վերին մասի լայնությունը՝ 4,5 սմ, իսկ ստորին մասինը՝ 6,5 սմ: Կոթաոային մասը կարճ է և ուռուցիկ, իսկ կոթաոը քառանկյունաձև է։

---

4 Т. С. Хачатрян, Древняя культура Ширака, Ереван, 1975, էջ 38։

5 Կացնի ձևաբանական մանրամասները նկարագրելիս օգտագործում ենք Ս. Կորենևսկու տերմինաբանությունը, որը, մեր կարծիքով, բավական հաջող օգտագործված է Ուրալի լեռնամետալուրգիական շրջանի կոթաոով կացինները բնորոշելու համար (С. Н. Кореневский, Металлические втульчатые топоры Уральской горнометаллургической области, «Советская археология» (այսուհետև՝ СА), 1973, № 1, էջ 40)։

Կացինը ձուլված է երկփեղկ կաղապարում, ուր ձուլվածքը (բրոնզը) լցվել է ներսի ճակատի կողմից։ Այդ է վկայում նրա արտաքին մասի ամբողջ երկարությամբ ձգվող կարը, որը ներսի կողմում լրիվ բացակայում է։ Լուսապատկերային (սպեկտրալ) վերլուծության միջոցով պարզվեց, որ ուսումնասիրվող կացնի մետաղի բաղադրության մեջ բացակայում են կապարը, անագը, ցինկը և բիսմուտը, իսկ մկնդեղը կազմում է 1,65 %, որը, անշուշտ, վկայում է մկնդեղային արհեստական բրոնզ ստանալու համար կանխամտածված արհեստական միացության մասին, հանգամանք, որը խիստ բնորոշ է Կուր-Արաքսյան մշակույթի մետաղամշակությանը[6]։ Տվյալ դեպքում քիմիական բաղադրամասերից որոշիչ դեր ունի նիկելի խառնուրդը, որը կազմում է 0,02 %։ Հայտնի է, որ վաղ բրոնզեդարյան Հայաստանի հետազոտված մետաղները բաժանվում են երկու մեծ խմբերի՝ ա) նիկելի 0,03 %-ից բարձր պարունակությամբ և բ) 0,02 %-ից ցածր պարունակությամբ մետաղներ։ Ուշագրավ է, որ ցածր նիկելային տոկոսայնությամբ մետաղները գոյա-



Նկ. 2

տևում են ամբողջ մ. թ. ա. III հազարամյակի ընթացքում, մինչդեռ բարձր տոկոսայնություն ունեցող մետաղե արտադրանքները հանդես են գալիս միայն մ. թ. ա. III հազարամյակի II կեսում[7]։

---

[6] А. Ц. Геворкян, Древнейшая металлургия и горное дело Армении (автореферат, М., 1972, էջ 10, 11)։

[7] Նույն տեղում, էջ 11, 13։

Հայաստանի պղնձահանքերի երկրաքիմիական ուսումնասիրությունները պարզել են, որ հանրավայրերի մեջ նիկելի պարունակությունը բարձր չէ հաղարերորդական տոկոսային չափերից և միջա փոքր է 0,03 %-ից[8]։ Այս փաստը ցույց է տալիս, որ Լենինականի կացինը, անկասկած, կարող էր ձուլվել տեղական հանքաքարերից ստացված բրոնզից։

Կուր-Արաքսյան մշակույթին պատկանող կախակոթառ կացինները ժամանակին լայնորեն լուսաբանվել են մասնագիտական գրականության մեջ[9], այդ իսկ պատճառով հարկ չենք համարում անդրադառնալ դրանց։ Տվյալ դեպքում մեզ հետաքրքրում է միայն մեկը, որը հայտնաբերվել է Մեջվրիսխևիից[10]։ Խնդիրն այն է, որ Լենինականի և Մեջվրիսխևիի կացինները խիստ նման են միմյանց։ Եթե չլիներ նրանց կոթառների էական տարբերությունը, ապա կարելի էր մտածել, որ դրանք ձուլվել են միևնույն կաղապարում։ Մեջվրիսխևիի կացնի (նկ. 2) կոթառը օղակաձև է, իսկ Լենինականինը՝ քառանկյունաձև։ Առայժմ դժվար է հիմնավոր բացատրել այդ փաստը, քանի որ ինչպես Կուր-Արաքսյան, այնպես էլ նրա հարևան շրջանների համաժամանակյա մշակույթներում չեն հայտնաբերվել քառանկյունաձև կոթառով կացիններ։ Մնում է ենթադրել, որ այն բերվել է այլ անհայտ վայրից, կամ էլ հանդիսանում է տեղի մետաղադործ-արհեստավորի յուրօրինակ արտադրանքի արգասիք։ Փաստացի զուգահեռների բացակայության պայմաններում մենք հակված ենք այն համարել տեղական արտադրանքին բնորոշ երևույթ։

Այժմ համառոտակի անդրադառնանք կացնի թվագրման հարցերին։ Ինչպես հայտնի է, սկզբում կախակոթառ կացինները թվագրվում էին մ. թ. ա. III—II հազարամյակների սահմանագլխով[11]։ Հետագայում Կուր-Արաքսյան մշակույթին պատկանող հուշարձանների պեղումների ընթացքում հայտնաբերված բազմահարուստ ու արժեքավոր նյութերի հիման վրա հնարավոր եղավ առանձնացնել նրանց միջև գոյություն ունեցող շերտագրական ու ժամանակագրական տարբերությունները, որոնք, իրենց հերթին, օգնեցին ըստ ժամանակաշրջանի դասավորելու բրոնզե կացինները։ Այսպես, դեռևս 1961 թ. Օ. Ջափարիձեն Մեջվրիսխևիի կացինը թվագրել է մ. թ. ա. XXVI—XXIV դդ.[12]։ Կ. Քուշնարյովան և Տ. Ջուբինիշվիլին նույն կացինը և նրա զուգահեռները թվագրել են մոտավորապես նույն ժամանակաշրջանով[13]։ Լենինականի կաց-

---

8 Ա. Ց. Գևորգյան, О древнейшей меднорудной базе Армении (СА, 1973, № 4, էջ 33—39)։

9 Դ. Լ. Կորիդզե, Новые находки медных орудий в Квемо-Картли (СА, 1958, № 1, էջ 134—140), Ա. Ա. Մարտիրոսյան, К предыстории древнейших этапов культуры Армении («Պատմա-բանասիրական հանդես», 1960, №1, էջ 92—96), С. А. Есаян, Оружие и военное дело древней Армении, Ереван, 1960, աղ. 6, նկ. 1—6, Է. Վ. Խանզադյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ. թ. ա. III հազարամյակում, Երևան, 1967, էջ 47—54։

10 Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, I, Тбилиси, 1941, էջ 6, նկ. 16, Д. Л. Коридзе, նշվ. աշխ. էջ 139։

11 Б. А. Куфтин, նշվ. աշխ., էջ 16, Д. Л. Коридзе, նշվ. աշխ., էջ 139։

12 О. М. Джапаридзе, К истории грузинских племен на ранней стадии медно-бронзовой культуры, Тбилиси, 1961, էջ 262 (վրացերեն)։

13 К. Х. Кушнарева, Т. Н. Чубинишвили, Древние культуры Южного Кавказа, Л., 1970, էջ 122։

նի և նրա զուգահեռների մանրազնին ուսումնասիրությունները մեզ ևս հանգեցրին այն կարծիքին, որ քննվող կացինը կարելի է թվագրել մ. թ. ա. III հազարամյակի կեսերով։ Այս կացնի թվագրության հարցը հնարավոր կլինի վերջնականապես ճշտել միայն այն ժամանակ, երբ կուսումնասիրվեն Լենինականի մսի կոմբինատի շրջակայքի հուշարձանի ստորին շերտերը։

ВИСЛООБУШНЫЙ ТОПОР ИЗ ЛЕНИНАКАНА

АРАМ ГЕВОРКЯН, ЛЕВОН ПЕТРОСЯН

Резюме

В музее истории Ширака хранится топор, представляющий определенный научный интерес для металлургического производства Армении III тыс. до н. э. Типологически он в целом напоминает широко распространенные вислообушные топоры Куро-Араксской культуры, но некоторые его морфологические признаки, в особенности прямоугольное сечение втулки, придают ему специфичность, объясняемую, на наш взгляд, технологической традицией той мастерской, в которой он изготовлен.

Спектральное исследование показало, что по своему химико-металлургическому составу топор отлит из низконикелистых руд с добавлением к ним 1,65% мышьяка. Рассматриваемый топор предварительно можно датировать серединой III тыс. до н. э.